

«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

Արտահերթ ժողովի

ք. Երևան

28 փետրվարի 2019թ.

Ժողովի սկզբում նախագահող ընտրվեց Գագիկ Գրիգորյանը, քարտուղար՝ Անի Դալլաքյանը: Ժողովի նախագահողը տեղեկացրեց, որ կազմակերպության 171 անդամներից ներկա են 92 անդամ, և ժողովը իրավագոր է: Այնուհետև ժողովի նախագահողի թույլտվությամբ, մինչև օրակարգի հաստատումը, ելույթ ունեցավ կազմակերպության գործադիր տնօրեն պարոն Ա.Ներսիսյանը, ով տեղեկացրեց, որ կազմակերպության անդամների կողմից ստացվել են առաջարկություններ ժողովի օրակարգում նոր հարցեր ընդգրկելու վերաբերյալ: Ծավալված քննարկումների և քվեարկության արդյունքում որոշվեց հաստատել հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու կանոնադրության փոփոխությունները և լրացումները հաստատելու մասին:
2. Այլ հարցեր:

1. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու կանոնադրության փոփոխությունները և լրացումները հաստատելու մասին

Ելույթ ունեցավ պարոն Ա. Վերդյանը, ով ներկայացրեց կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու իր առաջարկը, այն է՝ կանոնադրության մեջ ամրագրել կետ, ըստ որի վարչությունը կազմված է առավելագույնը 15 անդամից:

Առաջարկության վերաբերյալ ծավալվեց քննարկում, կազմակերպության տարբեր անդամներ ներկայացրեցին իրենց կարծիքը առաջարկի վերաբերյալ: Վարչության անդամների թվաքանակի սահմանափակման հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝ 78 կողմ, 11 դեմ և 2 ձեռնպահ:

Հաշվի առնելով, որ գործող կանոնադրության համաձայն ժողովի որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (այսինքն՝ որոշման ընդունման համար անհրաժեշտ էր 86 կողմ ձայն), կանոնադրության մեջ վարչության անդամների թվաքանակը սահմանափակելու որոշումը չընդունվեց:

Ելույթ ունեցավ պարոն Գ. Սադյանը, ով ներկայացրեց իր առաջարկությունները կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝

- վարչությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում է վարչության անդամների ոչ թե երկու երրորդից ավելին, այլ կեսից ավելին (առաջարկության ընդունման դեպքում համապատասխան փոփոխության պետք է ենթարկվի կանոնադրության 7.7 կետը),

- վարչությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում է վարչության անդամների ոչ թե երկու երրորդից ավելին, այլ կեսից ավելին (առաջարկության ընդունման դեպքում համապատասխան փոփոխության պետք է ենթարկվի կանոնադրության 7.7 կետը),

- վարչության որոշումները ընդունվում են ոչ թե ձայների պարզ մեծամասնությամբ, այլ նիստին ներկա վարչության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (առաջարկության ընդունման դեպքում համապատասխան փոփոխության պետք է ենթարկվի կանոնադրության 7.7 կետը),

- ժողովում որոշումներն ընդունվում են ոչ թե կազմակերպության բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ, այլ ժողովին ներկա անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ (առաջարկության ընդունման դեպքում համապատասխան փոփոխության պետք է ենթարկվի կանոնադրության 7.4 կետը):

Առաջարկությունների վերաբերյալ տեղի ունեցավ մտքերի փոխանակում, ծավալվեցին քննարկումներ: Առաջարկները յուրաքանչյուրն առանձին դրվեցին քվեարկության:

Կանոնադրության 7.7 կետում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները ընդունվեցին ձայների 91 կողմ, 0 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ, իսկ կանոնադրության 7.4 կետում փոփոխություն կատարելու առաջարկությունը ընդունվեց ձայների 87 կողմ, 5 դեմ և 0 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Որոշում՝

1. Կանոնադրության 7.7 կետում «երկու երրորդից» բառերը փոխարինել «կեսից» բառով, «Վարչության որոշումներն ընդունվում են» բառերից հեզո լրացնել «նիստին ներկա Վարչության անդամների» բառերը, իսկ կանոնադրության 7.4 կետի վերջին նախադասությունում «բոլոր» բառը փոխարինել «ժողովին ներկա» բառերով:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունները և լրացումը:

Պարոն Վ. Հովսեփյանի առաջարկությունը չքննարկվեց:

2. Այլ հարցեր

Ելույթ ունեցավ կազմակերպության գործադիր տնօրեն պարոն Ա. Ներսիսյանը, ով տեղեկացրեց, որ ստացվել են կազմակերպությանը անդամագրվելու 5 դիմում՝ ներկայացնելով կազմակերպությանն անդամագրվելու ցանկություն ունեցող անձանց (Աթանես Մարգարյան, Մարգարիտա Ղազարյան, Հարություն Հակոբյան, Էրիկ Խաչատրյան, Նազիկ Եգորյան): Միևնույն ժամանակ գործադիր տնօրենը նշեց, որ սահմանված ժամկետում անդամավճար չեն վճարել կազմակերպության 34 անդամ: Կազմակերպության գործադիր տնօրենը առաջարկեց բավարարել ստացված դիմումները և հեռացնել անդամավճարը սահմանված ժամկետում

չվճարած կազմակերպության անդամներին: Ժողովը միաձայն որոշեց բավարարել կազմակերպությանը անդամագրվելու համար ստացված 5 դիմումները:

Որոշում՝ Բավարարել Աթանես Մարգարյանի, Մարգարիտա Ղազարյանի, Հարություն Հակոբյանի, Էրիկ Խաչատրյանի, Նազիկ Եգորյանի դիմումները և ընդունել նրանց որպես կազմակերպության անդամ:

Ինչը վերաբերում է սահմանված ժամկետում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարած կազմակերպության 34 անդամին, ապա ժողովի նախագահողն առաջարկեց հնարավորություն տալ այդ անդամներին մեկշաբաթյա ժամկետում կատարել համապատասխան վճարումները: Ժողովի նախագահողի առաջարկությունը ընդունվեց միաձայն: Գործադիր տնօրենին տրվեց հետևյալ արձանագրային հանձնարարականը.

Արձանագրային հանձնարարական.

Սահմանված ժամկետում անդամավճարը վճարելու պարտականությունը չկատարած կազմակերպության 34 անդամներին կրկին անգամ տեղեկացնել անդամավճարը վճարելու անհրաժեշտության մասին՝ վճարման համար նրանց տրամադրելով մեկշաբաթյա ժամկետ:


Անդրադառնալով նոր արտահերթ ժողովի անցկացմանը, որտեղ նախատեսվում է քննարկել կազմակերպության կառավարման մարմինների ընտրությունների հարցը, կազմակերպության գործադիր տնօրենին տրվեց հետևյալ արձանագրային հանձնարարականը.

Արձանագրային հանձնարարական.

Կանոնադրության ընդունված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում հրավիրել նոր արտահերթ ժողով:

Ժողովի նախագահող՝

Գ. Գրիգորյան



Ժողովի քարտուղար՝

Ա. Դալլաքյան

